

ՀՐԱՄԱՆ № 1096

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍՍՐԻԱՏԻ

1937 թ. դեկտեմբերի 21-ին

1934 ՅեՎ, 1936 թ. թ. ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՁԻԵՐԻ ԱՆՁՆԱԳՐՄԱՆ
ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ՎԵՐԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

1937 թ. նոյեմբերի 23-ին ձիերի գլխաքանակի անձնագրման
նոր հրահանգի հաստատման կապակցությամբ վերադնել՝

1. ԽՍՀՄ Հողփողկոմատի 1934 թ. հուլիսի 27-ի № 6784
հրամանով հաստատված՝ «Ձիերի համար անձնագրեր տալու հրա-
հանգը»:

2. ԽՍՀՄ Հողփողկոմատի 1936 թ. փետրվարի 2-ին հաս-
տատված «Ձիերի գլխաքանակի անձնագրման ընթացիկ աշխա-
տանքի մասին հրահանգը»:

ԽՍՀ Միության Հողագործության
Ժողովրդական կոմիսարի սեղակալ՝ ՉՈՒՎԻԿՈՎ,



Ռուսերենից թարգմանեց և խմբագրեց Ա.Վ. Ալազեղյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրել է՝ Վ. Ավագյան

Հաստատված է
ԽՍՀ Մրության Հողագործության
Ժողկոմի տեղակալ՝ Վ. Զուգրիկովի կողմից
23 նոյեմբերի 1937 թ.

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՁԻՆՐԻ ԳԼԽԱՌԱՆՍԿԻ ԱՆՁՆԱԳՐՄԱՆ ՄՍՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Անձնագիրը մի փաստաթուղթ է, վոր հաստատում է ձիու պատկանելիությանը վորոշ ձիատիրոջ, նրա մեջ գրանցվում է նավաստանների ու զամրիկների ոգտադրածուժը վերաբրտադրման համար, ձիու պիտանիությունը ԲԳԿԲ համար, դիադնոստիկ հետազոտությունների արդյունքները և ձիատիրոջ փոփոխումները:

2. Անձնագրեր պետք է տրվեն այն բոլոր ձիերի համար, անկախ նրանց տարիքից, վորոնք պատկանում են՝ խորհրտեսու-թյուններին, կոլտնտեսություններին, պետական, կոոպերատիվ և այլ խորհրդային հիմնարկներին, կազմակերպություններին ու ձեռնարկություններին, անհատական տնտեսություններին, ինչպես և զինվորական կոոպերացիայի տնտեսություններին:

Մանրաբլում. — ԲԳԿԲ մասերի ու հիմնարկների, ներքոբժոկոմատի ու Զինձիարուժարանների ձիերն անձնագրման են յենթարկվում հատուկ հրահանգի հիման վրա:

3. Գյուղական վայրերում ձիերի գլխաքանակի անձնագրման աշխատանքը ղրվում է գյուղական խորհրդի նախագահի վրա և կատարվում է վորոշակի որերին, բայց վաչ պակաս շաքաթական մեկ որից:

Գյուղխորհրդի նախագահը անձնագրման աշխատանքին մասնակցելու գործում ներգրավում է զոտտեխնիկական կամ անասնաբուժական կրթություն ունեցող աշխատողի, կամ փորձառու ձիաբուժի, վորը ծանոթ է ձիերի ցեղը, սորաը վորոշելու և չափումների գործին՝ կոլտնտեսությունների անդամներից, մոտակա ՄՏԿ-ի, խորհրտեսությունների, անասնաբուժարանների, պետ. ախոռների, ձիամթերման բաղանների կամ շրջնորամնի աշխատողներից:

Բաղաքներում ու շրջանային կենտրոններում, ինչպես և գյուղական ու քաղաքային խորհուրդներին չամրացված տնտեսու-

Փլավիտի լիազոր՝ Ա. — 4021. Հրատ 4651.
Պատկեր 500. Տիրած 1000.
Թուղթ 62x94. Տպագր. 3/4 մամ.
Մեկ մամ 38 400 նշան. Հեղինակ. 0,66 մամ.
Հանձնված է արտադրություն 25 մայիսի 1938 թ.
Ստորագրված է տպագրության համար հունիսի 23-ին 1938 թ.

Պետհրատի 1 փպարան, Ցերևան, Լենինի 66,

թյուններում, ձիերի անձնագրումը կատարում է շրջհոդրաժնի գոտոտիանիկը: Շրջ (քաղ) հոդրաժին չունեցող քաղաքներում անձնագրումը կատարում է Քաղխորհուրդը:

4. Անձնագրումը կատարող անձի պարտականություն մեջ է մտնում.

- ա) ծնված մատղաշի համար անձնագիր տալը:
- բ) 3 տարին լրացած ձիերի անձնագրերը փոխանակելը.

զ) կորցրածի կամ գողացվածի փոխարեն անձնագրի պատճեն տալը.

դ) վորելի պատճառով անձնագրումից դուրս մնացած ձիերի համար անձնագրեր տալը.

ե) հովատակի ամորձատման դեպքում անձնագիրը փոխելը.

զ) ձիերի անկման, գնման ու վաճառման գրանցումը:

5. Ձիերի անձնագրման գծով հրահանգումը և գյուխորհուրդների աշխատանքի ստուգումը կատարում է շրջհոդրաժինը: Անձնագրման գծով շրջհոդրաժինների աշխատանքը ղեկավարում է համապատասխան յերկրային (մարզային) հողվարչություն, Միութենական ու ինքնավար հանրապետությունների Հողժողովոմատների ձիարուծական վարչությունը: ԽՍՀ Միություն մեջ ձիերի անձնագրման ընդհանուր ղեկավարությունը ղրվում է ԽՍՀՄ ՀԺԿ Ձիարուծական Գլխավոր Վարչություն վրա:

II. ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՈՒ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Անձնագիր տրվելիս ձին պետք է գնվի՝ նրա սեռը, տարիքը, ցեղն ու սորտը վորոշելու, չափումներ կատարելու, գույնն ու նշանները նկարագրելու համար:

Անձնագիր տվող մատղաշ ձիերի ու ամորձատվածների համար տրվող անձնագրերում լրացնում է միայն առաջին եջը, իսկ հովատակների ու զամբիկների անձնագրերում՝ առաջին և յերկրորդ եջերը:

7. Հովատակների և զամբիկների համար տրվող անձնագրերում տոհմային գրանցումների վերաբերյալ տվյալները լրացվում են հողային մարմինների կողմից տրված վկայականների ու ատեստատների հիման վրա: Այն դեպքում, յերբ ձիու ցեղն ու սորտը վորոշվել չի կարող, «ցեղը կամ սորտը» սյունակում հանձնաժողովը նշում է անում «վոչ ցեղային» ըստ նրա տիպի (լծի) վարգունային, հեծնելու):

Մնդավի (հետնարաշի) բարձրությունը չափվում է չափելու փայտով՝ դետնից մինչև մեղավի ամենաբարձր կետը:

Կրծքի փաթը չափվում է չափելու ժապավենով՝ անմիջապես թիակների հետեվի կողմից:

Դաստակի փաթը չափվում է չափելու ժապավենով՝ դաստակի վերելի յերրորդ ժասի ներքեվի մասում:

Բուրը նշված չափումների ժամանակ ձին պետք է կանգնած լինի ուղիղ և հարթ տեղում:

8. Ձիերի գնման ու վաճառման մասին անձնագրում նշումն արվում է գնման վայրի մոտակա գյուղ (քաղ) խորհրդում՝ ձին նոր տիրոջն անցնելու ժամանակ՝ յերկու տերերի հայտարարություն հիման վրա:

9. «Դրագնաստիկ հետազոտություններ, նախազգուշական և բուժիչ պատվաստումներ» բաժինը լրացվում է անասնաբուժական կազմի միջոցով:

10. Ձին զինվորական հաշվառումից հանելու ժամանակ զինվորական ստուգումների թերթիկի վրա Շրջզինկոմատը դնում է «հանված է զինվորական հաշվառումից» շտամպը:

Մատղաշ ձիերի անձնագրերում զինվորական հաշվառման ու զինվորական ստուգումների մասին վոչ մի նշում չի արվում:

11. Ձին ԲԳԿԲ Փոնդի համար առանձնացնելիս, զինգերատեսչություն ներկայացուցչի մասնակցությամբ հանձնաժողովի վորոշումից հետո «ԲԳԿԲ Փոնդ» սյունակում հանձնաժողովը նշում է «առանձնացված է ԲԳԿԲ Փոնդի համար»:

Ձինգերատեսչություն ներկայացուցիչը լրացնում է Փոնդի գծով հաշվառման քարտը, վորը պահելու համար հանձնվում է Շրջզինկոմատ:

12. Հովատակների անձնագրերում «Հովատակի բուժարանային գործունեություն» բաժինը լրացնում է կոլտնտեսություն վարչությունը կամ պետկոոպ-հիմնարկների զիրեկցիան: 2-րդ սյունակում նշվում է հովատակի պլանային բեռնվածությունը, վոր սահմանվում է շրջհոդրաժնի պլանի հիման վրա: 3-րդ և 4-րդ սյունակները լրացվում են գուգավորման գրանցումների (ցուցակների) հիման վրա: Մնացած 5, 6, 7 սյունակները լրացվում են վոչ ուշ քան հետևյալ տարվա ոգոստոսի 15-ը:

13. «Ձամբիկի բուժարանային գործունեություն» բաժինը լրացնում է կոլտնտվարչությունը կամ հիմնարկության զիրեկցիան: Առաջին սյունակում նշվում է, թե վերջին անգամ յերբ է

11-2816791

գուղափորված յեղել զամբիկը: 2-րդ սյունակում նշվում է հրածար-
վելու ժամանակը: 3-րդ սյունակում նշվում է, թե յերբ և սպաս-
վում զամբիկի ծինը: 4-րդ սյունակում նշվում է այն հովատակի
անունը, սորտը կամ ցեղը, վորով ծածկված է յեղել զամբիկը:
5-րդ և 9-րդ սյունակները լրացվում են վոչ ուշ քան 10 որ ծնից
հետո՝ ծնի արձանագրության հիման վրա: 6-րդ սյունակը լրաց-
վում է այն ժամանակ, յերբ հաստատույես պարզված է, վոր
զամբիկն ստերջ է մնացել: 7-րդ սյունակը լրացվում է, յերբ
պարզված է, վոր զամբիկը վիժել է, բնդ վորում 8-րդ սյունա-
կում նշվում է վիժման պատճառը՝ արձանագրության հիման վրա:

14. Ձիու անկման զեպքում անկման պատճառների մասին
նշումներն արվում են անասնաբուժական կազմի միջոցով առաջին
եջում:

15. Կտրականապես արգելվում է հիմնարկներին, կազմա-
կերպություններին, պաշտոնական ու մասնավոր անձանց՝
վորեկն նշումներ, ուղղումներ և լրացումներ անել ինչպես անձնա-
գրի շապիկի վրա, այնպես և ներքին թերթերում:

16. Մտրուկը ծնվելիս զամբիկի տերը պարտավոր է զամբիկը
ծնելուց մեկ ամսվա ընթացքում զամբիկին մտրուկի հետ տանել
գյուղխորհուրդ կամ շրջ (քաղ) հողբաժին՝ զբանջման յենթարկելու,
վորից հետո մտրուկի համար նրան անձնագիր է տրվում: Այն
զեպքում, յերբ զամբիկի տերն ապրում է գյուղխորհրդի վայրից
10 կիլոմետրից ավել տարածության վրա — թույլ է արվում
հեռակա անձնագրում (առանց զամբիկը մտրուկի հետ տանելու),
այն պայմանով, վոր ձիատերը անասնաբուժական պերսոնալից
կամ հիմնարկի վարչությունից փաստաթուղթ ներկայացնի զամ-
բիկի ծնելու մասին, ընդ վորում փաստաթուղթում պետք է նշված
լինի ձիու տերը, ձիու սեռը, անունն ու նրա գույքային համարը,
մտրուկի ծնվելու ժամանակը, գույնը, նշանները և ցեղը:

17. Մտրողաների անձնագրերը փոխվում և տրվում են
մեծահասակ ձիերի անձնագիր, յերբ լրանում է նրանց 3 տարին:

18. Անձնագիրը կորցնելու զեպքում ձիու տերը պարտավոր
է տասն որվա ընթացքում հայտնել այդ մասին գյուղխորհրդին:
Այն կազմակերպություններն ու հիմնարկները, վորոնք կցված
չեն գյուղական կամ քաղաքային խորհուրդներին, անձնագրի կո-
րբստի մասին հայտնում են Շրջհողբաժին: Նոր անձնագիրը
«պատճեն» մակագրությամբ տրվում է անձնագրի կորստի մասին

դիմում արվուց հետո մեկ ամսվա ընթացքում, յեթե միլիցիայից
տեղեկանք է ներկայացվում դիմում տալու մասին:

19. Հովատակի անձնագիրն ամորձատվածի անձնագրով փոխա-
նակելիս անձնագիր տվողը պարտավոր է պահանջել ամորձատումը
թույլատրելու անասնաբուժական-գոտեխնիկական ակա, վորի
մեջ պետք է մատնանշված լինեն ամորձատման պատճառները:

Ամորձատումը թույլատրելու մասին անասնաբուժական —
գոտեխնիկական ակադ հովատակի անձնագրի հետ միասին մնում
է անձնագիր տվողի մոտ, նրանց փոխարեն տրվում է ամորձատ-
վածի անձնագիր:

20. Ձին մեկ տիրոջից մյուսին անցնելիս (վաճառք և այլն)
անձնագիրը հանձնվում է նոր տիրոջը, վորը պարտավոր է 10
որվա ընթացքում ներկայացնել աշգրիտին իր բնակավայրի գյուղ-
խորհուրդ՝ տոմարագրման համար: Ձին վաճառելիս նախկին տերը
պարտավոր է 10 որվա ընթացքում հայտնել իր բնակավայրի
գյուղխորհրդին այն մասին, վոր ինքը ձին վաճառել է, մատնա-
նշելով ժամանակը, վաճառման վայրը, ներկայացնելով վաճառքը
տոմարագրելու մասին տեղեկանք: Դյուղական կամ քաղաքային
խորհուրդներին չամրացված կազմակերպություններն ու հիմնարկ-
ները գնման-վաճառման փաստաթղթերը ներկայացնում են շրջ-
ջանային հողբաժիններին:

21. Ձիու անկման և կորստի զեպքում ձիատերը պարտա-
վոր է տասն որվա ժամկետում անձնագիրը հանձնել գյուղխոր-
հրդին, շրջ (քաղ) հողբաժինն, անկման զեպքում՝ անասնաբուժա-
կան պերսոնալի մակագրությամբ անկման պատճառների մասին,
կորստի զեպքում՝ միլիցիայի մակագրությամբ վորոնելու համար
հայտարարություն տալու մասին:

22. Ձիերի անձնագրերն իր ժամանակին չստանալու, գնում-
ները, վաճառքները, կորուստներն ու անկումներն իր ժամանակին
չզբանցելու համար ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1934 թ. դեկտեմբերի 5-ի
վորոշման հիման վրա հանցավորները յենթարկվում են մինչև 100
ռուբլի տուգանքի: Տուգանքները նշանակում են շրջգործկոմիները,
քաղխորհուրդները՝ զաշնակից հանրապետությունների կողմից
վարչական զանազանների մասին սահմանված որենսդրության
կարգով:

23. Անձնագրերն ունեն ԽՍՀ Միության Հողժողկոմատի
կողմից սահմանված համարակալում՝ յուրաքանչյուր հանրապետու-
թյան, յերկրի, մարզի համար: Համարակալումը հետեվյալ տա-
րիներին համար շարունակվում է աճող թվերով:

24. Կոլտնտեսություններին, խորհանտեսություններին, պետական և կոոպերատիվ հիմնարկներին պատկանող ձիերի համար տված անձնագրերը պահվում են նրանց գրասենյակներում, իսկ անհատական ոգտագործման մեջ գտնվող ձիերի համար տրված անձնագրերը գտնվում են ձիատերերի մոտ:

25. Ձիերի համար նոր տրված անձնագրերը, անձնագրերի պատճենները (գուբրիկատները), փոխանակված անձնագրերը, տրվյալ գյուղական և քաղաքային խորհրդի սահմաններում յեղած տնտեսությունը մուտք գործած ձիերի անձնագրերը պետք է գրանցվեն անձնագրերի գրանցման պրքի մեջ: Տվյալ խորհրդի սահմաններին ձին դուրս գալու, ձիու անկման, կորստի, անձնագրի կորստի մասին գրքում համապատասխան նշումներ են արվում:

Շրջ (քաղ) հողբաժինը նույնպես պահում է անձնագրերի գրանցման գիրք և նրա մեջ համապատասխան նշումներ են անում ըստ շրջանային կենտրոնի կամ քաղաքի տնտեսությունների, ինչպես և ըստ այն տնտեսությունների, վորոնք վարչական բաժանումով չեն կցված գյուղական և քաղաքային խորհուրդներին:

III. ԱՆՁՆԱԳՐԵՐԻ ԲԱՆԿՆԵՐԸ ՊԱՀԵՆՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

26. Ձիերի անձնագրերի բանկները խիստ հաշվառման փաստաթղթեր են և գրամական փաստաթղթերին համահավասար ընդունվում, պահվում և ծախսվում են այն անձանց անձնական պատասխանատվությամբ, ովքեր կատարում են անձնագրումը, այսինքն՝ գյուղխորհրդի նախագահների և շրջ (քաղ) հողբաժինների պատասխանատու պասպորտիստների անձնական պատասխանատվությամբ:

27. «Սոյուզգորգուչոտ»-ի պահեստների կամ տպարանների կողմից՝ Ձիարուծական Գլխավոր վարչություն կարգադրող առանձին Ձիարուծական վարչությունների հասցեյով ուղարկվելիք բանկների համար «Սոյուզգորգուչոտ»-ը բեռնազիր և գուրս գրում, ճշտորեն նշելով ուղարկվող անձնագրերի բանկների քանակը՝ առանձին-առանձին ըստ ձիերի յուրաքանչյուր խմբի:

Ձիարուծական վարչություն պատասխանատու պասպորտիստը հաշվում է «Սոյուզգորգուչոտ»-ին ստացված անձնագրերի բանկները և նրանց քանակի մասին ակտ է կազմում, նշելով

բեռնազրի մեջ բանկների ձիշտ քանակը՝ ըստ շրջ (քաղ) հողբաժինների ու քաղխորհուրդների ուղարկելու ժամանակ:

Գյուղխորհուրդներում ու քաղխորհուրդներում անձնագրման համար պատասխանատու անձինք շրջհողբաժիններից ստանում են բանկները, պարտադիր կարգով համբում են և ստացված քանակի մասին ակտ կազմում: Բանկների առկա քանակի և բեռնագրում նշված քանակի մեջ տարբերություն լինելու դեպքում բոլոր ինստանցիաները՝ անձնագրերի բանկների պակասորդի մասին կազմված ակտերի պատճենները հանձնում են միլիցիայի մարմիններին՝ հանցավորներին հայտարարելու և նրանց պատասխանատվության յենթարկելու համար:

28. Բանկների պահպանման վայրում՝ «Սոյուզգորգուչոտ»-ի տպարաններում ու պահեստներում, ինչպես և շրջ (քաղ) հողբաժիններում և գյուղխորհուրդներում և նրանց գողացման դեպքում անհապաղ գողացված բանկների քանակի մասին ակտ է կազմվում, վորը հանձնվում է միլիցիայի որդաններին՝ գողացողին գտնելու և հանցավորներին պատասխանատվության կանչելու համար:

Յեթե գողացված բանկները համարակալված են յեղել, թերթերում հայտարարվում է, վոր անվավեր են համարվում այն անձնագրերը, վորոնք կրում են գողացված անձնագրերի համարներն ու սերիաները:

29. Լրացնելու ժամանակ փչացած անձնագրային բանկները, ինչպես և ձիերի անկման դեպքում ձիատերերի հանձնած լրացված անձնագրերը մարվում են՝ ջնջումներ կատարելով շապկի, առաջին ու յերկրորդ եջի վրա և ուղարկվում են շրջ (քաղ) հողբաժիններին:

30. Շրջ (քաղ) հողբաժնի պատասխանատու պասպորտիստը շրջ (քաղ) հողբաժնի վարիչի մասնակցությամբ յեռամայակում մեկ անգամ ակտ է կազմում փչացած բանկների ու սատկած ձիերի անձնագրերի վոչնչացման մասին, նշելով վոչնչացածների քանակը:

Վոչնչացման յենթակա անձնագրերն այրվում են:

31. Յերբ ձիատերերը գյուղական, քաղաքային խորհրդին են հանձնում գողացված ձիերի լրացրած անձնագրերը, անձնագրման գծով աշխատողներն այդ անձնագրերն ուղարկում են շրջ (քաղ) հողբաժինները, վորտեղ գրանք պահվում են 5 տարի՝ հաշված ձիու գողացման որից, վորից հետո, յեթե գողացված ձին

չի գտնվի, վոչնչացվում են՝ սատկած ձիերի անձնագրերի հետ համահավասար: Յեթե գողացված ձին գտնվում է, նրա անձնագրերը վերադարձվում է ձիատիրոջը:

32. Անձնագրման գործը մի աշխատակցից մյուսին հանձնելիս պետք է ահա կազմվի նշելով՝

ա) հանձնվող չլրացրած անձնագրային բլանկները քանակն ստանձին-առանձին ըստ ձիերի խմբերի.

բ) փչացրած անձնագրային բլանկների քանակը, նույնպես վերածելով ըստ ձիերի խմբերի.

գ) հովատակների և մատղաշների անձնագրերի փոխանակման ժամանակ մարեցրած անձնագրերի քանակը.

դ) մինչև հանձնման մոմենտը անձնագրերի զբանցման գրքում կատարած վերջին զբանցումը.

յե) հողբաժնի հաշվում անձնագրումից ստացված միջոցների քանակը, հանձնվող կանխիկ գումարները, իսկ յեթե հանձնումը կատարվում է գյուղական կամ քաղաքային խորհրդում, ապա գյուղխորհրդի կամ քաղխորհրդի հատուկ հաշվում խնայրամարկդում կամ Պետրանկում անձնագրման գծով յեղած միջոցների քանակը:

VI. ԶԻԵՐԻ ԱՆՁՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՍՍՍ.ՅՎՈՂ ՄԻՋՈՅՆԵՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՅԵՎ ԾԱԽՍՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

33. Յուրաքանչյուր տրված անձնագրի համար, այն տալու ժամանակ, վճար է գանձվում մեկ ուրբուլ հավով:

34. Գյուղական և քաղաքային խորհուրդները անձնագրերի համար ստացված միջոցներից 35%⁰-ը թողնում են իրենց տրամադրության տակ և այդ միջոցներն ոչտադործում են անձնագրման գծով աշխատողի և գյուղական վայրերում գյուղխորհրդի նախագահին ոգնելու նպատակով հրավիրված ձիարուծ մասնագետի վարձատրության համար: Հավաքված միջոցների մնացած 65%⁰ գյուղական և քաղաքային խորհուրդները յուրաքանչյուր ամսի 1-ին փոխադրում են շրջ (քաղ) հողբաժնի հատուկ ընթացիկ հաշվին:

35. Շրջ (քաղ) հողբաժնիները ձիերի անձնագրման համար մուտք յեղած բոլոր գումարներից թողնում են իրենց տրամադրության տակ սկզբնական գանձման 50%⁰, այսինքն ձիատիրոջից ստացված յուրաքանչյուր մեկ ուրբուլ 50 կոպեկ և ոչտադործում են շրջհողբաժնի պատասխանառու պատրուխտի աշ-

խատանքի լրացուցիչ վարձատրության համար, ավյալ շրջանի բոլոր գյուղ և քաղ. խորհուրդների համար ստացվելիք անձնագրման գծով բլանկների արժեքները հատուցելու և վոչ մեծ ձիագլխի քանակ ունեցող գյուղ (քաղ) խորհուրդներում անձնագրման գծով ծախսերի դատացիայի համար:

Սկզբնական գանձման գումարների մնացած 15%⁰, այսինքն ձիատիրոջից ստացված յուրաքանչյուր մեկ ուրբուլ 15 կոպեկ, շրջհողբաժնիները յուրաքանչյուր ամսի 5-ին փոխադրում են մարզային (յերկրային և հանրապետական) ձիարուծական վարչությունների հատուկ ընթացիկ հաշվին Պետրանկում, նրանց տրամադրության տակ:

Ծ ա ն ո թ ու թ յ ու Ն.— Գյուղխորհուրդներին չամբացված շրջանային կենտրոններում և հիմնարկներում շրջ (քաղ) հողբաժնիների պատրուխտների կողմից անմիջականորեն ձիատերերից հավաքվելիք գումարներից, շրջ (քաղ) հողբաժնիների տրամադրության տակ մնում է վոչ թե 50%⁰, այլ 85%⁰, այսինքն ձիատիրոջից ստացված յուրաքանչյուր մեկ ուրբուլ 85 կոպեկ:

36. Գյուղական խորհուրդների կողմից ձիերի անձնագրումից ստացված միջոցները պետք է պահվեն խնայրամարկդում կամ Պետրանկում հատուկ հաշվում, շրջ (քաղ) հողբաժնիների կողմից անձնագրումից ստացվելիք միջոցները պահվում են Պետրանկում հատուկ հաշվում:

37. Մարզային, յերկրային, հանրապետական ձիարուծական վարչությունները ձիերի անձնագրման համար շրջ (քաղ) հողբաժնիներից ստացված գումարներն ոչտադործում են՝ անձնագրման գծով աշխատողին վարձատրելու և անձնագրման ոպերատիվ դեկավարության գործուղման ծախսեր կատարելու համար:

Ծ ա ն ո թ ու թ յ ու Ն.— Միութենական հանրապետությունների և յերկրների ձիարուծական վարչությունները, վորոնք իրենց սխտեմում ունեն մարզային, հանրապետական կամ սկրուզային ձիարուծական վարչություններ, ինչպես որինակ ՈւՄՍՀ, Դաղախական ՍՍՀ, վերջինների տրամադրության տակ թողնում են սկզբնական գանձման 10%⁰, իսկ իրենց տրամադրության տակ՝ 5%⁰, այսինքն ձիատիրոջից ստացված յուրաքանչյուր մեկ ուրբուլ 5 կոպեկ:

11
28167

Խ Ս Ն Մ

**ԶԻԱԲՈՒՄԻՆԻՍՏՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**
19 մայիսի 1938թ.
№ 162 - 1 - 29

Միութենական և ինքնավար հան-
րապետությունների հողփոփո-
մատներին, յերկրների (մար-
զերի) հողային բաժինների պե-
տերին

Ի յրում 1937 թ. նոյեմբերի 23-ի
ԽՍՆՄ ՀԺԿ-ի կողմից հաստատված՝
ձիադլիսի անձնագրման մասին հրահան-
դի, ԽՍՆՄ Հողփոփոմատն առջարկում
ե անձնագրման գծով հետագա աշխա-
տանքում

1. Ընկած ապահովագրված ձիերի անձնագրերը, անկման
մասին անձնագրի առաջին հջում և անձնագրերի գրանցման
գրքում համապատասխան նշումներ անելուց հետո, հանձնել
գյուղական ապահովագրական հանձնաժողովներին՝ այդպիսիներն
անկման և ապահովագրման ակտի հետ միասին շրջանային ապա-
հովագրման տեսչությանն ուղարկելու համար:

2. Բոլոր դեպքերում, լերր ձիերի անձնագրման ժամանակ
անձնագրային կետում կհայտնարերվի, վոր ընկած ապահովա-
գրված ձիու համար ակտ չի կազմված, անձնագրային կետը
պարտավոր ե այդ մասին հաղորդել շրջ (քաղ) ապահովագրման
տեսչությանը:



ԽՍՆՄ Միության Հողադործության,
Փողփոփոկան կոմիտարի տեղակալ ՉՈՒՎԻԿՅԱՎ

33 Ազգային գրադարան

NL0933145